ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XXVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

Վեց ու կես տասնամյակ է, ինչ կազմավորվել և գործում է Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որն անցել է փառավոր ուղի, դարձել Սովետական Միության կոմունիստական կուսակցության մարտական ջոկատներից մեկը։ Հայաստանի կոմկուսի ղեկավարությամբ հանրապետության աշխատավորները նվաճել են շատ բարձունքներ, հասել տպավորիչ հաջողություններ։ Նշանավոր իրադարձության՝ ՍՄԿԿ XXVII համագումարի նախաշեմին, 1986 թ. հունվարի 24—25-ը տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության հերթական՝ XXVIII համագումարը, որին մասնակցում էին 940 պատգամավորներ։ Նրանց 64%-ը պատգամավոր էր ընտրվել առաջին անգամ։ Համագումարում ներկայացված էին հանրապետության բոլոր շրջանային և քաղաքային կուսակցական կազմակերպությունները։ Մասնակցում էին նաև վերջերս ստեղծված՝ Բաղրամյանի, Երևանի Մաշտոցի, Լենինականի Մոսկովյան և Շիրակի շրջանների կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Պատգամավորների թվում էին բանվորներ, կոլտնտեսականներ, գիտության, առողջապահության, ժողովրդական կրթության, սովետական զինված ուժերի ներկայացուցիչներ, կուսակցական, սովետական, արհմիութենական և կոմերիտական աշխատողներ։ Հատկանշական է, որ պատգամավորների գերակշռող մասը՝ գրեթե 53%-ը անմիջականորեն նյութական արտադրության ոլորտում զբաղված կոմունիստներ էին[1]։ Պատգամավորների կազմն արտացոլում է Հայաստանի կուսակցական կազմակերպության ինտերնացիոնալ բնույթը, մարմնավորում մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը։ Պատգամավորների թվում կային Հայաստանում բնակվող շատ ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ՝ հայեր, ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, ադրբեջանցիներ, վրացիներ, քրդեր, ասորիներ և ուրիշներ։

Համագումարը լսեց և քննարկեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանի զեկուցումը՝ ՀԿԿ Կենտկոմի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVIII համագումարին և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը։ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թթ. և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների նախագծի մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը։ Համագումարն ընդունեց բանաձևեր ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության և ՍՄԿԿ կանոնադրության փոփոխությունների նախագծերի առթիվ, ընտրեց ՀԿԿ ղեկավար մարմիններ և ՍՍԿԿ XXVII համագումարի 50 պատգամավորներ։ Համագումարը հավանություն տվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քաղաքական ու պրակտիկ գործունեությանը։ Համագումարը նշանակալից իրադարձություն էր հանրապետության կոմունիստների, բոլոր աշխատավորների կյանքում։ Այն սկզբունքային դիրքերից գնահատեց ՀԿԿ Կենտկոմի գործունեությունը կազմակերպական, գաղափարական, քաղաքական-դաստիարակչական, տնտեսական բնագավառներում, կոնկրետացրեց կուսակցական կազմակերպության անելիքներն առաջիկա հնգամյակում։ «Հինգ տարի է անցել Հայաստանի կոմկուսի XXVII համագումարից,— նշեց Կ. Ս. Դեմիրճյանը,— դրանք լարված աշխատանքի, միասնական սովետական ընտանիքում մեր հանրապետության հե-

---

[1] «Սովետական Հայաստան», 26. I. 1986։

տագա համակողմանի առաջընթացի տարիներ էին։ Մենք շատ բան սովորեցինք, հարստացանք փորձով։ Մենք իրավամբ հպարտանում ենք մեր նվաճումներով, պարզորոշ տեսնում թերություններն ու վրիպումները։ Մենք գիտենք, որ մեզ սպասում են մեծ գործեր՝ նորարական, մասշտաբային, դժվարին գործեր։ Մենք գիտենք, որ դրանց իրագործումը յուրաքանչյուրից կպահանջի մտքի ծավալուն աշխատանք, լարված գործունեություն, նպատակասլացություն, գիտակցականություն և մեծ կազմակերպվածություն»[2]։

Հայաստանի կոմկուսի XXVIII համագումարը մեծ ուշադրություն նվիրեց Հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման հարցերին։ Նախ ամփոփվեցին 11-րդ հնգամյակի արդյունքները։ Կուսակցական կազմակերպությունների, կոմունիստների, բոլոր աշխատավորների աշխատանքի գլխավոր արդյունքը հնգամյա ծրագրի իրականացումն է։ Հանրապետությունը նոր հաջողությունների հասավ տնտեսական ու կուլտուրական շինարարության մեջ, մեծացավ նրա ավանդը ընդհանուր միութենական խնդիրների լուծման գործում։ Ահա հանրապետության աշխատավորների նվաճումները բնութագրող մի քանի թվեր ու փաստեր։ Հնգամյակում արդյունաբերության արտադրանքի արտադրությունն ավելացել է 33,2%-ով՝ պլանով նախատեսված 30-ի դիմաց։ Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը հինգ տարում բարձրացել է 16,4%-ով՝ նախատեսված 16,1-ի փոխարեն։ Բնորոշն այն է, որ արդյունաբերական արտադրության բացարձակ հավելաճի 96%-ը ձեռք է բերվել գործող ձեռնարկությունների ընդլայնման, տեխնիկական վերազինման և տեղակայված կարողությունների օգտագործման արդյունավետության բարձրացման հաշվին։ Հնգամյա պլանից դուրս արտադրվել է 670 միլիոն ռուբլու արդյունաբերական արտադրանք[3]։ Ավելի արագ են աճել այն ճյուղերը, որոնք որոշում են գիտատեխնիկական առաջադիմությունը՝ ռադիոտեխնիկական, էլեկտրոնային, սարքաշինական, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, ճշգրիտ հաստոցաշինությունը։ Առաջանցիկ տեմպերով է քայլել նաև «Բ» խմբի արդյունաբերությունը։

ՀԿԿ XXVII համագումարից հետո Կենտկոմը, կուսակցական կոմիտեները, սկզբնական կուսակազմակերպությունները սկսեցին ուշադրություն են նվիրել կուսակցության ագրարային քաղաքականության, պարենային ծրագրի իրագործմանը։ Մի շարք արմատական հարցերի գործնական լուծման շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունը բարձրացել է որակապես նոր մակարդակի։ Այն դարձել է ավելի բարձրարտադրողական, ֆոնդահագեցած և էներգահագեցած ճյուղ։ Անցած հնգամյակի տարիներին ագրոարդյունաբերական համալիրի հիմնական ֆոնդերը մեծացել են 28%-ով։ Մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել ջրատնտեսական շինարարության և հողերի մելիորացման ուղղությամբ։ Հանրապետության կոլտնտեսություններն ու սովխոզներն ստացել են ավելի շատ հանքային պարարտանյութեր, գյուղատնտեսական մեքենաներ ու տեխնիկա։ Մեծ ուշադրություն է նվիրվել գյուղի սոցիալական զարգացմանը, առանձնապես լեռնային ու նախալեռնային շրջաններում։ Պետական միջոցների հաշվին կառուցվել են մեծ թվով բնակելի տներ, ակումբներ ու մշակույթի պալատներ, դպրոցներ, մանկական նախադպրոցական հիմնարկներ, ջրատարներ, գազամուղներ։ Այս ամենը, ինչ խոսք, բարենպաստ պայմաններ են ստեղծել գյուղական բնակչության թվի ավելացման, նրա արտահոսքի պակասեցման, գյուղում կադրերի ամրացման համար։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալը կազմել է 13,8%, հնգամյակի համար նախատեսված 10,9-ի դիմաց[4]։ Ամբողջությամբ վերցրած հանրապետությունում կատարվել ու գերակատարվել են հիմնական

---

2 Նույն տեղում, 25. I. 1986։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

գյուղատնտեսական մթերքների արտադրության ու մթերումների հնգամյա պլանները։

Նոր առաջընթաց քայլ է կատարել կապիտալ շինարարությունը։ 11-րդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին բազմաթիվ ձեռնարկություններ, խոշոր արտադրամասեր, նոր կարողություններ, բնակելի տներ, դպրոցներ, նախադպրոցական հիմնարկներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ։ Հիշենք թեկուզ Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանները, «Զվարթնոց» և «Էրեբունի» օդանավակայանները, Երևանի մարզահամերգային համալիրը, Իջևան—Հրազդան երկաթուղին և այլն։ Համագումարը գոհունակությամբ նշեց, որ անցած հնգամյակում հանրապետությունում իրագործվել է սոցիալական լայն ծրագիր, է՛լ ավելի է բարձրացել ժողովրդի բարեկեցությունը, բարելավվել են մեր մարդկանց կենսապայմանները։ Բերենք միայն մեկ փաստ։ Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին կառուցվել և շահագործման են հանձնվել 5,4 միլիոն քմ. ընդհանուր մակերեսով բնակելի տներ։ Դա հնարավորություն է տվել բարելավելու ավելի քան 117 հազար ընտանիքների բնակարանային պայմանները, վերացնելու մոտ 100 հազար քմ մակերեսով բարաքներ և նկուղային կացարաններ[5]։ Ձեռք բերված այս նվաճումների համար է, որ Սովետական Հայաստանը հնգամյակի ընթացքում հինգերորդ անգամ անընդմեջ արժանացավ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀամԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին։

Խոսելով հանրապետության նվաճումների մասին, պետք է նշել նաև այն մեծ ավանդը, որ այդ գործում ունի քաղաքամայր Երևանը։ Դեռևս անցյալ տարվա նոյեմբերի 20-ին երևանցիները զեկուցեցին արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալի հնգամյա պլանի կատարման մասին։ Պլանից դուրս թողարկվեց և իրացվեց համապատասխանաբար 422 և 355 միլիոն ռուբլու արտադրանք։ 11-րդ հնգամյակում քաղաքում թողարկվեց 660 միլիոն ռուբլով ավելի շատ արդյունաբերական արտադրանք, քան նախորդ հնգամյակում[6]։ Համամիութենական սոցիալիստական մրցության արդյունքներով Երևան քաղաքը 10-րդ անգամ անընդմեջ արժանացավ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀամԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին։ Մեծ իրադարձություն էր մայրաքաղաքի պարգևատրումը հայրենիքի բարձրագույն պարգևով՝ Լենինի շքանշանով։ Ինչպես նշվեց Երևանի քաղաքային կազմակերպության XXXIX կոնֆերանսում, դա Երևանի աշխատավորների բոլոր սերունդների գործունեության բարձր գնահատականն է։ Սովետական Հայաստանի մայրաքաղաքի համակողմանի զարգացման նոր փուլ է նշանավորում ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը Երևանի քաղաքային տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին։

Ամփոփելով հանրապետության աշխատավորների մեծ նվաճումները, ՀԿԿ XXVIII համագումարը կրկին ընդգծեց ժողովուրդների բարեկամության դերն այդ գործում։ «Սովետական Հայաստանի ժողովուրդը,— համագումարում ասաց Կ. Ս. Դեմիրճյանը,— խորապես գիտակցում է, որ ինքը երբեք չէր կարողանա այդքան արագորեն և այդքան հաջողությամբ արմատական սոցիալ-տնտեսական վերափոխություններ իրականացնել, համակողմանի առաջադիմություն հասնել իր հողում, չի կարող տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում նոր բարձունքներ նվաճել մեն-մենակ, առանց սովետական եղբայր ժողովուրդների և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի վիթխարի ու բազմակողմանի օգնության... Բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի, մեր հայրենիքի բոլոր եղբայրական ժողովուրդների հետ եղել է, կա ու միշտ

---

5 Նույն տեղում։

6 «Էրեկոյան Երևան», 13. I. 1986։

կլինի սրբություն հայ ժողովրդի համար, նրա կյանքի հզոր շարժիչ ուժը, նրա հաջողությունների գրավականը»[7]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVIII համագումարն ըստ արժանվույն գնահատելով ձեռք բերվածը, միաժամանակ նշեց, որ հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման գործում դեռևս առկա են լուրջ թերություններ, բացթողումներ, չլուծված պրոբլեմներ, որոնք պետք է հաղթահարվեն կուսակցական կազմակերպությունների հետևողական աշխատանքով։ «Կենտկոմը,— նշվեց համագումարում,— քննադատաբար է գնահատում ձեռք բերված արդյունքները... Մեզ չեն կարող գոհացնել գիտատեխնիկական առաջադիմության արագացման, արտադրության ինտենսիվացման և նրա արդյունավետության բարձրացման տեմպերը։ Դեռևս... հաստատակամ աշխատանք չի տարվում արտադրության կառավարման ու կազմակերպման կատարելագործման, ձեռնարկությունների վերակառուցման ու տեխնիկական վերազինման, նրանց արտադրական ապարատի նորոգման, դրա ռացիոնալ օգտագործման, տնտեսման ու ռեսուրսախնայողության ուղղությամբ։ Հետագա ամրապնդման կարիք ունի պետական, արտադրական ու աշխատանքային կարգապահությունը»[8]։

ՀԿԿ XXVIII համագումարը քննարկեց և հավանություն տվեց ՍՄԿԿ XXVII համագումարին ներկայացվող ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների մասին ՍՄԿԿ Կենտկոմի նախագծին։ Հիմնական ուղղություններում մեծ տեղ են գրավում նաև արտադրողական ուժերի տեղաբաշխման և միութենական հանրապետությունների տնտեսական ու սոցիալական զարգացման հարցերը։

Իսկ ի՞նչ բնագծեր կնվաճեն Սովետական Հայաստանի աշխատավորները նոր հնգամյակում։ Նախ նշենք, որ հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման պլանի նախագիծը կազմելիս պլանավորող մարմինները ելել են 12-րդ հնգամյակի գլխավոր խնդրի հետևողական ու լրիվ իրականացման անհրաժեշտությունից։ Դիմենք փաստերին։ Նոր հնգամյակում ազգային եկամուտը կավելանա 24,6%-ով, իսկ արդյունաբերական արտադրության ծավալը՝ 25,9%-ով[9]։ Հաշվի առնելով հանրային արտադրությունը զարգացման ինտենսիվ ուղու փոխադրելու անհրաժեշտությունը, արդյունաբերական արտադրանքի աճի մոտ 95%-ը կապահովվի գործող ձեռնարկությունների վերակառուցման, տեխնիկական վերազինման ու ընդլայնման հաշվին։ Առաջիկա տարիներին ևս կշարունակվի գիտատեխնիկական առաջընթացը որոշող ճյուղերի առաջանցիկ զարգացման գիծը։ Այսպես, մեքենաշինության արտադրանքի ծավալը կմեծանա 54,2%-ով։ Դա 2,1 անգամ ավելի է, քան ամբողջ արդյունաբերությունում[10], և լիովին բխում է ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման արագացումն ապահովելու խնդրից, որ առաջադրել է ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումը։

Խնդիր է դրված 12-րդ հնգամյակում զգալիորեն ընդլայնել ժողովրդական սպառման առարկաների արտադրությունը, բարելավել դրանց որակը։ Բավական է նշել, որ այդ ապրանքների արտադրության ծավալը կավելանա գրեթե 27%-ով[11]։ Առաջիկա տարիներին ևս կշարունակվի հանրապետության ագրոարդյունաբերական կոմպլեքսի ճյուղերի փոխկապակցված, հավասարակշռված զարգացման ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքը։ Կոմպլեքսային մեքենայացման, քիմիացման, էլեկտրիֆիկացման, հողերի մելիորացման, ինտենսիվ տեխնոլոգիաների լայն ներդրման միջոցով, ըստ էության,

---

7 «Սովետական Հայաստան», 25. I. 1986։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, 26. I. 1986։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում։

պետք է ավարտվի գյուղատնտեսության փոխադրումը ինդուստրիալ հիմքերի վրա։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալը, ամբողջությամբ վերցրած, կաճի 12,1%-ով[12]։ Կավելանան հացահատիկի, բանջարեղենի, մսի, կաթի, ձվի արտադրությունը, կշարունակվեն հողերի մելիորացման աշխատանքները, կկառուցվեն մի շարք ջրամբարներ, կլուծվի Սևանա լճի ջրի մակարդակը 6 մետրով բարձրացնելու պրոբլեմը։

Նոր հնգամյակի կարևոր առանձնահատկությունն այն է, որ հանրապետությանը հատկացվող կապիտալ ներդրումները անցած հնգամյակի համեմատությամբ կաճեն 55,5%-ով։ Դա հնարավորություն կտա շահագործման հանձնելու մոտ 4,8 միլիոն քմ բնակելի տարածություն, մեծ թվով դպրոցներ, հիվանդանոցներ, ավարտել Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի շինարարությունը, շահագործման հանձնել արդյունաբերական նոր օբյեկտներ, կառուցել Վարդենիս—Ջերմուկ երկաթուղին։ Մինչև 1990 թ. շարք կմտնեն այնպիսի նշակի օբյեկտներ, ինչպիսիք են Երևանի քաղսովետի գործկոմի շենքը, մանկական գեղագիտական կենտրոնը, բարեկամության տունը, Ռուսական դրամատիկական թատրոնը, «Կասկադ» հասարակական-կուլտուրական հուշահամալիրը, Դավիթաշենի կամուրջը և այլն[13]։

ՀԿԿ XXVIII համագումարի որոշումներում և փաստաթղթերում ընդհանրացվեց գաղափարախոսական, քաղդաստիարակչական աշխատանքի փորձը, ձևակերպվեցին այդ աշխատանքի հետագա բարելավման խնդիրները։ Ինչպես նշվեց համագումարում, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել գաղափարախոսական աշխատանքի, դաստիարակչական պրոցեսի կոմպլեքսային կազմակերպման և դրա արդյունավետության բարձրացման հարցերը, դրանք քննարկել Կենտկոմի պլենումներում, բյուրոյի և քարտուղարության նիստերում, կուսակցական ակտիվի ժողովներում։ Կատարելագործվել են քաղաքական ուսուցման և տնտեսագիտական կրթության, դասախոսական աշխատանքի մյուս ձևերը, բարելավվել է պրոպագանդիստական կադրերի որակական կազմը, ավելի բովանդակալից է դարձել աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությունը։ Կուսակցական կազմակերպություններն ուժեղացրել են սոցիալիզմի նվաճումները պրոպագանդելու, հակառակորդի գաղափարախոսական դիվերսիաները մերկացնելու աշխատանքը։ Այս ամենի հետ մեկտեղ, ինչպես մատնանշվեց համագումարում, դեռ ամեն ինչ չի արվել, որպեսզի գաղափարախոսական աշխատանքը շաղկապված լինի կյանքի, գլխավոր խնդրի՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու հետ։ Մի շարք կուսակցական կազմակերպություններում առաջվա պես շատ է խոսվում գաղափարախոսական աշխատանքի վերակառուցման անհրաժեշտության մասին, իսկ իրականում այդ վերակառուցումն ակտիվորեն չի իրագործվում, դանդաղ են վերացվում թերությունները ու վրիպումները։ Դաստիարակչական աշխատանքում շարունակվում են ձևականությունն ու խրատամոլությունը։

Մեր օրերում օրինաչափորեն աճում է կոմունիստական կուսակցության ղեկավար դերը, բարձրանում կոմունիստների պատասխանատվությունը։ Նրման պայմաններում մեծ նշանակություն են ստանում կուսակցական-կազմակերպական աշխատանքը, նրա ոճի ու մեթոդների կատարելագործումը։ Ահա թե ինչու Հայաստանի կոմկուսի հերթական համաժողովը հանգամանորեն անդրադարձավ այդ հարցերին։

Կուսակցական շինարարության արմատական հարցերից մեկը կուսակցության անդամության հարցն է։ Չէ՞ որ կուսակցության կազմով է մեծ մասամբ պայմանավորված նրա գործունեության հաջողությունը։ Մեր հանրապետության կուսակցական կազմակերպությունները զգալի աշխատանք են կատարել կուսակցության մեջ ընդունելությունը, ընդունվողների որակական կազմը բա-

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

բելավելու ուղղությամբ։ Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի կուսակցական կազմակերպությունը աճել է 21899 անդամներով ու անդամության թեկնածուներով[14]։ Համեմատության համար նշենք, որ նախորդ հնգամյակում ՀԿԿ շարքերն ընդունվել է 26865 մարդ[15]։ Դա արդյունք է այն բանի, որ կուսակցական կազմակերպություններն ուժեղացրել են կարգավորող ազդեցությունն իրենց շարքերի աճի նկատմամբ, մեծացրել պահանջկոտությունը, խստիվ պահպանում են անհատական ընտրության սկզբունքը։ Կուսակցական շարքերի աճի մյուս բնորոշ կողմն էլ այն է, որ կուսակցության մեջ հարաճուն կերպով ավելանում է բանվորների թիվը։ Այսպես, ՀԿԿ XXVII համագումարից հետո կուսակցական համալրման մեջ բանվորները կազմել են 63,1%։ Ընդունվածների 25%-ը ժողովրդական տնտեսության մասնագետներ են, 35,9%-ը կանայք, 74,6%-ը՝ կոմերիտականներ։ Այժմ Հայաստանի կոմկուսն ունի 5866 սկզբնական կազմակերպություն, որոնք միավորում են 186637 կոմունիստների[16]։ Հայաստանի կոմկուսի շարքերում կան ՍՍՀՄ 45 ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ[17]։ Հետաքրքիր է կատարել որոշ համեմատություններ։ ՀԿԿ I համագումարը տեղի է ունեցել 1922 թ.։ Այն ժամանակ ՀԿԿ մեջ հաշվվում էր ընդամենը 6012 կոմունիստ[18]։ Դա նշանակում է, որ անցած 60 տարում կոմունիստների թիվը Հայաստանում աճել է ավելի քան 31 անգամ։ Մեծանում է նաև հանրապետության ամենախոշոր՝ Երևանի կուսակցական կազմակերպության անդամների թիվը։ Վերջին երկու տարում քաղաքային կազմակերպությունը աճել է 4650 մարդով և ներկայումս իր շարքերում ունի 76230 կոմունիստ։ Միայն Երևանում հաշվվում է 1738 սկզբնական կուսակցական կազմակերպություն[19]։

Հայաստանի կոմունիստների համաժողովում գործարար խոսակցություն ընթացավ կադրային քաղաքականության մասին։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումներում երկու անգամ քննարկվել են կադրային աշխատանքի, կադրերի գործունեության, ոճի ու մեթոդների կատարելագործման հարցերը՝ կուսակցության նոր պահանջներին համապատասխան։ Հետևողական աշխատանք է տարվել արտադրության և կառավարման բոլոր օղակներն քաղաքականապես հասուն, գիտակ, գործիմաց, եռանդուն բարոյական բարձր հատկանիշներով օժտված կադրերով ամրապնդելու ուղղությամբ։ Կադրերի նկատմամբ հարգանքը, վստահությունը զուգակցվել է բարձր պահանջկոտության հետ։ Միաժամանակ կադրային աշխատանքում դեռևս կան շատ թերություններ ու բացեր։ Համագումարում կոնկրետ օրինակներ բերվեցին, որ առանձին դեպքերում կադրերն ընտրելիս թույլ են տրվել անսկզբունքայնության դրսևորումներ, մակերեսային մոտեցում այդ կարևոր գործի նկատմամբ։ «Կադրերի սխալ նշանակման յուրաքանչյուր փաստ,— նշվեց համագումարում,— պետք է ստանա ամենասկզբունքային և ամենախիստ կուսակցական գնահատական... Պետք է բարձրացնել պահանջկոտությունը յուրաքանչյուրի նկատմամբ, անկախ նրա զբաղեցրած պաշտոնից... ոչ մի ներողամտություն չպետք է ցուցաբերվի նրանց նկատմամբ, ովքեր չեն արդարացնում վստահությունը, խախտում են կարգապահությունն ու կարգուկանոնը, թույլ են տալիս անվայել արարքներ, վնաս հասցնում մեր ընդհանուր գործին...»[20]։

ՍՄԿԿ հաջող գործունեության գրավականներից է կուսակցական կյանքի լենինյան նորմաների և սկզբունքների հետևողական կիրառումը։ ՀԿԿ XXVIII

---

14 Նույն տեղում, 25. I. 1986։

15 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը Հայաստանի կոմկուսի XXVII համագումարին, Երևան, 1981, էջ 122։

16 «Սովետական Հայաստան», 25. I. 1986։

17 Նույն տեղում, 13. X. 1985։

18 «Компартия Армении в цифрах и документах. 1920—1980», Ереван, 1980, с. 78.

19 «Հոկտեմբերյան Երևան», 29. XII. 1985։

20 «Սովետական Հայաստան», 25. I. 1986։

համագումարն արձանագրեց, որ վերջին տարիներս ամրապնդվել և հետագա զարգացում է ստացել ներկուսակցական դեմոկրատիան, կոլեկտիվ ղեկավարման սկզբունքը, կատարելագործվել են կուսակցական կոմիտեների և կազմակերպությունների աշխատանքի ոճն ու մեթոդները։ Ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման դրսևորումներից մեկը կուսակցական կազմակերպությունների հաշվետու ընտրական կամպանիան է, որը տեղի ունեցավ համագումարի նախօրյակին։ Բավական է նշել, որ կուսակցական ժողովներում ու կոնֆերանսներում ելույթ է ունեցել ավելի քան 60 հազար կոմունիստ[21]։ Կոմունիստները, բոլոր աշխատավորները լիովին հավանություն են տալիս կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականությանը, պաշտպանում երկրի տնտեսական ու սոցիալական զարգացումն արագացնելու կուրսը։ Միաժամանակ ժողովներում ու կոնֆերանսներում կոմունիստները քննադատության ու ինքնաքննադատության մթնոլորտում, գործարար կերպով քննարկել են իրենց կոլեկտիվների ցավոտ հարցերը, բացահայտել թերություններն ու վրիպումները, նշել աշխատանքը բարելավելու հնարավորություններն ու ուղիները։

Դեմոկրատական ցենտրալիզմի կողմերից մեկը կոլեգիալությունն է, որը կուսակցական ղեկավարման կարևոր սկզբունքն է։ Եվ պետք է ընդգծել, որ վերջին տարիներս մեր հանրապետությունում ևս բարձրացել է ղեկավարման կոլեկտիվ մարմինների դերը, խստիվ պահպանվում է աշխատանքի կոլեկտիվության սկզբունքը։ Կանոնավոր հրավիրվում են կուսակցական կոմիտեների պլենումները, բյուրոների նիստերը, անցկացվում են կուսակցական ակտիվի ժողովներ, որտեղ քննարկվում են կուսակցական շինարարության, տնտեսական ու սոցիալական զարգացման արմատական հարցեր։

Կոլեկտիվ աշխատանքի լավ օրինակ է ցուցադրում Հայաստանի կոմկուսի Կենտկոմը։ XXVIII համագումարին նախորդող 5 տարում տեղի են ունեցել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 23 պլենում, բյուրոյի 170 և քարտուղարության 56 նիստ, անցկացվել է կուսակցական ակտիվի 10 ժողով[22]։ Դրանցում քննարկվել են մեր կյանքի բոլոր բնագավառներին վերաբերող բազմաթիվ ու բազմապիսի հարցեր։ Մի հանգամանք ևս։ Վերջին ժամանակներս մամուլում հաղորդում է տրվում Կենտկոմի բյուրոյի և քարտուղարության նիստերի ու գրանցում քննարկվող հարցերի մասին։ Դա, ինչ խոսք, ավելի է բարձրացնում այդ կոլեգիալ մարմինների հեղինակությունը, ապահովում է կուսակցական աշխատանքի հրապարակայնությունը։

Կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի իրականացման արդյունավետ գործոններից մեկը աշխատավորների նամակներն են։ Անցած հինգ տարում Հայաստանի կոմկուսի ապարատում ստացվել է 88313 նամակ և դիմում[23]։ Ինչի՞ մասին են գրում նամակների հեղինակները։ Հարկ է նշել, որ վերջին տարիներս ստացվող նամակների բովանդակության և բնույթի մեջ զգալի փոփոխություններ են տեղի ունեցել։ Մեծ չափով ավելացել է այն նամակների թիվը, որոնցում կոմունիստներն ու անկուսակցականները բարձրացնում են համապետական ու համակուսակցական նշանակություն ունեցող հարցեր և որոնք բովանդակում են կուսակցության որոշումների արձագանքներ։ Շատ նամակներում կոմունիստները, աշխատավորները, հավանություն տալով ՍՄԿԿ ներքին ու արտաքին քաղաքականությանը, միաժամանակ դրվատանքով գրում են հանրապետության նվաճումների, օրեցօր գեղեցկացող քաղաքների ու շրջկենտրոնների մասին։ Նամակների հեղինակները կոնկրետ, գործնական առաջարկություններ են անում, ցանկություններ հայտնում, խորհուրդներ տալիս, որոնց նպատակն է ավելի բարելավել պետական ու կուսակցական ապարատի օղակների գործունեությունը, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, բարելավել աշխատանքի որակը, վերացնել նկատվող թերությունները։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, 26. I. 1986։

Նամակներում աշխատավորները բարձրացնում են նաև անձնական բնույթի հարցեր։ Այսպիսով, նամակների միջոցով աշխատավորներն ըստ էության անմիջական մասնակցություն են ունենում կուսակցական, պետական հարցերի քննարկմանը և լուծմանը։ Կարևորն այն է, որ նամակներում բարձրացված շատ առաջարկություններ, քննադատական դիտողություններ հաշվի են առնվում ղեկավար մարմինների կողմից, իրենց արտահայտությունն են գտնում ընդունված որոշումներում։ ՀԿԿ XXVIII համագումարն արձանագրեց, որ վերջին տարիներս զգալիորեն բարելավվել է քաղաքացիների ընդունելության կազմակերպումը, աշխատավորների նամակների, դիմումների ու գանգատների քննարկումը Կենտկոմի ապարատում։ Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ Կենտկոմի բյուրոյի և քարտուղարության նիստերում քննարկվել են նամակների հետ կապված 60 հարցեր[24]։ Դրական այս միտումների հետ միասին առանձին կուսակցական կազմակերպություններում աշխատավորների դիմումների ու նամակների նկատմամբ ցուցաբերվում է ոչ բարեխիղճ վերաբերմունք, իրականացվում է դրանց ձևական քննարկում, անբավարար է կազմակերպվում քաղաքացիների ընդունելությունը։ Նման թերությունները վերացնելու մտահոգությամբ համագումարը խորհուրդ տվեց հետևողականորեն կենսագործել նամակների հետ տարվող աշխատանքի լենինյան սկզբունքները, կատարելագործել նրա ձևերն ու մեթոդները։ Դա կուսակցական կոմիտեների առաջնահերթ խնդիրներից է։

Ինչպես նշվեց, ՀԿԿ XXVIII համագումարի ուշադրության կենտրոնում էին ՍՄԿԿ XXVII համագումարի փաստաթղթերը՝ ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության, կանոնադրության փոփոխությունների և երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղությունների նախագծերը։ Դեռևս մինչև համագումարը դրանց քննարկումը ակտիվ ու շահագրգիռ անցավ հանրապետությունում տեղի ունեցած կուսակցական կազմակերպությունների, աշխատավորական կոլեկտիվների ժողովներում, շրջանային և քաղաքային կուսակցական կազմակերպությունների կոնֆերանսներում։ Հայաստանի կոմունիստների համաժողովի ողջ աշխատանքը, նրա ընդունած որոշումները նույնպես տոգորված են այդ փաստաթղթերի հիմնական գաղափարներով։ Համագումարի պատգամավորները լիովին ու միահամուռ հավանություն տվեցին դրանց։

ՀԿԿ XXVIII համագումարն ընդունեց հանրապետության հետագա առաջընթացի գիտականորեն հիմնավորված ծրագիրը։ Սովետական Հայաստանի կոմունիստները, աշխատավորները, կենսագործելով այդ ծրագիրը, դրանով իսկ արժանի ավանդ կներդնեն մեր հայրենիքի հզորության հետագա ամրապնդման գործում։

XXVIII СЪЕЗД КОМПАРТИИ АРМЕНИИ

ГРИГОР АЙВАЗЯН

Резюме

XXVIII съезд Компартии Армении—знаменательное событие в жизни коммунистов, всех трудящихся республики. Съезд подвел итоги одиннадцатой пятилетки, определил очередные задачи партийных организаций в политической, идеологической и хозяйственной областях. В отчетном докладе Центрального Комитета Компартии Армении освещена многогранная деятельность партийных комитетов, первичных партийных организаций по претворению в жизнь решений XXVI съезда КПСС и XXVII съезда Компартии Армении.

Очередной съезд Компартии Армении принял научно-обоснованную программу дальнейшего развития республики. Коммунисты и все трудящиеся Советской Армении приложат все свои усилия для претворения её в жизнь.

24 Նույն տեղում։